



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐԱՆՈՒԹՅԱՆ


ԹԻԻ 37

ՄԱՐՏ 24/6 ԱՊՐԵԼ 1912

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ԶԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



[Faint, illegible handwriting throughout the page, possibly bleed-through from the reverse side.]






ԿԱԹՈՂՈՍԻԿԵ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ



Երկրորդ տարի † Մաս 24/6 Ապրիլ † Թիւ 37

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

ՃԱՌ. Ս. ԳՐԻԳՈՐԻ ՄԵՍԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

(Աւ. քոս Մարկոսի, գլ. ժ. 1—7)

Ձեզի, սիրեցեալ եղբա՛րք, բազմապիսի գրութեամբ և ընթերցմամբ սովորած եմ խօսիլ. սակայն որովհետեւ անհանգստութեան պատճառաւ գրել տուածս ես չեմ կրնար կարգաւ անձամբ, կը տեսնեմ թէ ձեզմէ ոմանք նուազ յօժարութեամբ կ'ունկնդրեն. Ուստի սովորութեանս հակառակ ինքզինքս կը պարտաւորեմ Ս. Պատարագի հանդիսութեանց մէջ Ս. Աւետարանը ոչ գրաւոր ընթերցմամբ, այլ բերանացի աւանդել ձեզ, եւ դուք ընդունեցէք իբրեւ խօսակցութիւն. քանզի խօսակցութեան կենդանի ձայնը աւելի կը սթափեցնէ յիմրած սրտերը քան թէ ընթերցմամբ քարոզութիւնը, և կարծես հոգածու ձեռքով մը կը

գորդէ որպէս զի արթուն կենան : Ապաքէն կը զգամ թէ այս գործի բա-
ւական չպիտի ըլլամ . սակայն այն ոյժը զոր անփորձութիւնը կը մերժէ ,
եղբայրական սէրը կը մատակարարէ : Քանզի գիտեմ զայն որ ըսաւ .
«Բերանդ թա՛ց, եւ պիտի յեցնեմ զայն» (Սղմ . 2, 11) : Ուստի բարի գոր-
ծը մենք կամքով ուզենք . զի անոր կատարուիլը աստուածային օղնա-
նականութենէն պէտք է տկուկալել : Խօսելու համարձակութիւնը կուտայ
նոյն իսկ տէրունական յարութեան այսքան մեծ հանդիսութիւնը : Քանզի
իրաւցնէ մեծապէս անարժան բան է որ այսպիսի օրունան մը մէջ պարտու-
պատշաճ գովութիւնները լռէ մարմնոյ լեզուն , որ օրունան մէջ յարու-
թիւն առաւ ստեղծողին մարմինը :

Լսեցէք , ամենասիրելի եղբա՛րք , որ սուրբ կանայք որոնք Տիրոջ
ետեւէն գացած էին , խունկերով և անուշ իւղերով եկան ի գերեզման :
և անոր՝ զոր սիրած էին երբ կենդանի էր , նաեւ յետ մահուան յարգու-
թիւն կը մատուցանեն մեծաւ փութով : Այլ կատարուած գործը եկեղեց-
ւոյ մէջ կատարուելու գործի մ'ալ կ'ակնարկէ : Ասոր համար , ա՛յնպէս
պէտք է լսենք եղած բաները , որպէս զի խորհիւնք թէ մենք ալ անոնց
նմանելով ի՛նչ պէտք է ընենք : Ուստի եթէ մենք ալ անոր՝ որ մեռաւ ,
հաւատալով , առաքինութիւններու բուրումովը լեցուած , լարի գործոց
դիտաւորութեամբ մեր Տէրը փնտռելու ըլլանք , յիշատի խունկերով և
իւղերով եկած կը սկսուինք ի սուրբ գրեզմանն : Այն կիներն որոնք
խունկերով եկան , հրեշտակները կը տեսնեն . այսինքն թէ՛ ա՛յն միա-
քերը երկնաւոր քաղաքացիները կը տեսնեն կը նկատեն , որոնք առաքի-
նութեանց անուշահամ հոտերով կը դիմեն կ'երթան առ Տէր սուրբ
բաղձանքներով : Իսկ պէտք է դիտենք թէ ի՛նչ կը նշանակէ հրեշտակին
աջակողմ հստած ըլլալը : Քանզի ի՛նչ ցոյց կուտայ ձախտկողմը՝ եթէ ոչ
ներկայ կեանքը . և ի՛նչ աջակողմը՝ եթէ ոչ յաւերժական կեանքը : Վասն
որոյ Երգ երգոցի մէջ գրուած է . «Անոր ձախը իմ գիտուս ներքեւ , եւ անոր
աջը պիտի գրկեմ զիս» (Երգ . Բ , 6) : Եւ քանզի մեր Փրկիչը ներկայ կե-
նաց ապականութենէն անցած էր ապատուած էր , իրաւամբ այն հրեշ-
տակն որ անոր անթառամ կեանքն աւետելու եկած էր , կը նստէր ընդ
աջակողմն : Նա երեւցաւ ճերմակ զգեստ հագած . որովհետեւ մեր սո-
նախմբութեան շքեղութիւնը կը յայտնէ : Մեր պէտք է ըսենք թէ իրենց
Բայց որպէս զի ճշմարիտ անունը խոստովանիւնք , թէ՛ իրենը ըսելու ենք
և թէ մերը : Քանզի մեր փրկիչին այն յարութիւնը՝ թէ՛ մեր տօնախմբու-
թիւնն եղաւ , զի զմեզ յանմահութիւն փոխարկեց , և թէ՛ հրեշտակաց
տօնախմբութիւնն եղաւ զի զմեզ յերկնաւորս կոչելով , անոնց թիւը լրա-
ցուց : Ուստի իւր և մեր տօնախմբութեան մէջ հրեշտակն սպիտակ պատ-
մունձան հագած երեւցաւ . քանզի Տէրունական յարութեան ձեռքով մեր
ի վերնականս փոխադրուելովն երկնաւոր հայրենեաց վնասները կը նո-
րոգուին :

Բայց լսենք ինչ կ'ըսէ եկող կրնորուն. «Մի՛ վախճա՛մ» . իբրեւ թէ բացայայտ ըսէր . Թող վախճա՛մ անոնք որ վերին քաղաքացեաց գալուստը չեն սիրեր , զարհուրին անո՛նք , որ մարմնական ցանկութիւններով պաշարուած , անոնց ընկերակցութեան հասնիլ կարենալէ կը յուսահատին : Իսկ դուք ինչո՞ւ կը զարհուրիք , որ ձեր քաղաքացիները կը տեսնէք . որով և Մատթէոս երբ կը նկարագրէ հրեշտակին երեւումը , ըսաւ . «Անոր դիմքը փայլակի նման էր . եւ անոր զգեստը ձիւնի պէս ճերմակ» (Մատթ . ԻԸ , 3) : Բանդի փայլակի մէջ՝ երկիւղի սարսափն է . իսկ ձեան մէջ՝ սպիտակափայլ խանդաղատանք : Եւ որովհետեւ ամենակալն Աստուած թէ՛ սարսափելի է՝ մեղաւորաց , թէ՛ հեզահոգի՝ արդարոց . իրաւամբ անոր յարութեան վկայն հրեշտակը թէ՛ դէմքը փայլակնացայտ , և թէ՛ զգեստը սպիտակաշող ցոյց կը տրուի . որպէս զի նոյն իսկ իւր արտաքին տեսիլքովը անդգամները սարսափեցնէ , երկիւղածները գգուէ չոյէ : Ասոր ի նշանակէր որ Իսրայէլի ժողովուրդին անապատներէ անցած ժամանակ (Ելք . ԺԳ , 21 , 22) , գիշերը հրեղէն սիւն և ցորեկը ամպեղէն սիւն անոր առջեւէն կ'երթար : Բանդի հրոյ մէջ սարսափ է , իսկ ամպի մէջ՝ քաղցր փայփայանք . իսկ ցորեկը՝ կը նշանակէ արդարի կեանքը , և գիշերը՝ մեղաւորին կեանքը : Ասոր համար է որ Պաւլոս դարձի եկած մեղաւորներուն կ'ըսէ . «Ասեմ մը դոյս ալ խաւար էիք , բայց հիմա շոյս էք ի Տէր» (Եփ . Ե , 8) : Որով ցորեկ ատեն ամպով սիւն ցուցուեցաւ , և գիշեր ատեն կրակէ սիւն . որովհետեւ ամենակարող Աստուած արդարոց հեզահամբոյր և մեղաւորաց ահաւոր պիտի երեւնայ , երբ գայ ի դատաստան , արդարները պիտի ամօքէ իր հեզութեամբ , իսկ մեղաւորները պիտի պակուցանէ արդարութեան սուրովը :

Սակայն դեռ լսենք թէ ինչ կ'աւելցնէ հրեշտակը . «Դուք , կ'ըսէ Նազովրեցի Յիսուսը կը փնտռե՛ք» : Յիսուս մեր լեզուով կը թարգմանուի՝ Փրկիչ : Ան ատեն շատերը կրնային Յիսուս կոչուիլ . բայց ոչ իրապէս , այլ անուանական : Անոր համար տեղն ալ կ'աւելցուի , որպէս զի հասկցուի թէ ո՞ր Յիսուսի վրայ է խօսքը . Նազովրեցի : Եւ շուտով կը յաւելու պատճառն ալ . զխայեղեալն . և ըսաւ . «Յարութիւն առաւ . հոս չե՛ք» : Հոս չէ , կ'ըսուի , մարմնոյ ներկայութեամբ . մինչդեռ բնաւ հեռու չպիտի ըլլայ Աստուածային մեծփայելութեանը ներկայութեամբ : «Այլ զացե՛ք , ըսե՛ք անոր աշակերտներուն ու Պետրոսի , թէ անա Ձեզմէ յառաջ կ'երթայ ի Դաշիղիա :» Պէտք է քննենք թէ ինչո՞ւ աշակերտները անուանելէ վերջը , Պետրոս յակնէ յանուանէ կը յիշատակուի : Արդ եթէ հրեշտակը զայն իւր անուամբը նշանակելու չըլլար , նա իր Տէրն ուրացած ըլլալուն համար , միւս աշակերտաց հետ գալու պիտի չհամարձակէր : Ուստի կը կոչուի յանուանէ , որպէս զի չուսահատի ուրացութեան համար : Երրում պէտք է մտածենք թէ ի՞նչու ամենակարող Աստուած թող տուաւ որ նա՛ զոր միտքը դրած էր բովանդակ եկեղեցւոյ գլուխ կարգել , աղախ-

նայ մը ձայնէն սարսափէր և զինքը ուրանար։ Կ'իմանանք թէ այս ամէնը կատարուեցաւ մեծ գթութեան մը տնօրէնութեամբ։ որպէս զի այն որ Եկեղեցւոյ ապագայ հովիւը պիտի ըլլար, իր յանցանքով սորվէր թէ ի՞նչպէս կը պարտէր գթալ ուրիշներուն վրայ։ Ուստի նախեւառաջ զայն ցոյց կուտայ ինքնիրեն, և ապա՝ գլուխ կը կարգէ այլոց, որպէս զի իր տկարութենէն սորվի թէ որպիսի՝ գթասրտութեամբ այլոց տկարութիւններուն պիտի հանդուրժէր։

Իսկ մեր Փրկչին վրայոք չատ պատշաճապէս կ'ըսուի։ «Ձեզմէ յառաջ պիտի երթայ ի Գալիլիա ինչպէս որ ըսաւ Ձեզ»։ Քանզի Գալիլիա կը նշանակէ զաղոյք և փոխադրութիւն։ Եւ մեր Փրկչին արդէն չարչարանքէ ի յարութիւն, մահուընէ ի կեանս, պատիժէն ի փառս, տապկանութենէ յանապականութիւն փոխուած էր։ Եւ նախ յարութենէն վերջը, Գալիլիոյ մէջ, աշակերտներուն կ'երեւայ, որովհետեւ Անոր յարութեան փառքը վերջը ցնծութեամբ պիտի տեսնենք, եթէ հիմա չար ցանկութիւններէն և մոլութիւններէն փոխուինք բարձրանալու, ի բարձունս առաքինութեանց։ Ուստի նա՝ որուն աւետիսը կը արուի գերեզմանի մէջ, ի տեղափոխութեան անդ կ'երեւի։ Քանզի նա՝ որ մարմնայ մահացման մէջ կը ճանչցուի, մտքի վերազման մէջ կը տեսնուի։ Այս ամէնը, ամենասիրելի եղբարք, այսքան մեծ օրուան հանդիսութեանը վրայ, աւետարանական ընթերցումի մեկնաբանութեամբ խօսեցանք, սակայն հաճելի է որ սոյն այս տօնախմբութեան վրայ նորագոյն ինչ ևս խօսինք։

Քանզի երկու կեանքեր կային. մին ճանչցած էինք, միւսը կ'անգիտանայինք։ Ձի մին՝ մահացու է, միւսն՝ անապական, մին՝ մահու, միւսն՝ յարութեան։ Սակայն եկաւ միջնորդն Աստուծոյ և մարդկան՝ մտորչն Բրիստոս Յիսուս, առաւ մին, և յայտնեց միւսը։ Մին կրեց մեռնելով և յայտնեց միւսը յառնելով։ Ուստի եթէ մեզի՝ որ մահացու կեանքը գիտէինք, մարմնոյ յարութիւնը խոստանար, և սակայն տեսանելի կերպով զայն ցոյց տալու չըլլար, ո՞վ պիտի հաւատար անոր խոստումներուն։ Որով՝ մարդ եղաւ և երեւեցաւ ի մարմնի, կամաւ յանձն առաւ մեռնիլ, և իւր կարողութեամբ յարեաւ, և օրինակաւ ցուցուց այն բանը զոր խոստացաւ մեզ ի վարձ։ Այլ հնար է ըսէ մէկը. Իրաւամբ յարութիւն առաւ նա՝ որ Աստուած ըլլալով, չէր կրնար ըմբռնիլ ի մահուանէն։ Ուստի մեր սգիտութիւնը դաստիարակելու, մեր տկարութիւնը զօրացնելու համար, չուզեց որ իր յարութեան օրինակը բաւական ըլլայ մեզ։ Այն ժամանակ ինքը մինակ մեռաւ, և սակայն մինակ յարութիւն չառաւ։ Քանզի գրուած է. «Եւ սուրբ ննջեցեալներու շատ մը մարմիններ յարութիւն առին» (Մատթ. Իէ. 52)։ Ուրեմն նենգութեան ամէն հնարագիտութիւնք մէկզի եղան։ Որպէսզի մէկը չըսէ թէ՝ Մարդս պէտք չէ յուսայ ինչ որ իւր մարմնոյն մէջ ցոյց տուաւ Մարդն-Աստուած, ահա կը քեանենք որ Աստուծոյ հետ ի միասին մարդիկ ևս կը յառնեն, և չենք

տարակուսիր որ անոնք սոսկ մարդիկ էին։ Ուստի եթէ մեր Փրկչին անգամներն ենք, մեզի համար ալ հաւատանք այն բանը որ կատարուեցաւ մեր գլխուն Քրիստոսի վրայ, թէեւ շատ խոնարհ ըլլանք, պէտք է յուսանք որ մեզի՝ ամենայնոն անդամներու ալ պահուած է, ինչ որ աւոր բարձրագոյն անդամներուն վրայօք լսեցինք։

Եւ ահա միտքս կ'իյնայ այն զոր խաչեցեալ Որդւոյն Աստուծոյ Հրեայք նախատինք ընելով կ'ըսէին. «Եթէ Իսրայէլի թագաւորն է, թող իջնէ հիմա այդ խաչէն և հաւստանք իրեն» (Անդ, 42)։ Որ եթէ վար իջած ըլլար, համբերութեան առաքինութիւնը ցոյց տուած չէր ըլլար մեզ։ Այլ սպասեց վայրիկ մի. անարգանքներու հանդարտեց, ծաղրաբանութեանց տարաւ, պահեց համբերութիւնը, յապաղեց սքանչացումը. և այն որ խաչէն իջնել չուզեց, գերեզմանէն յարութիւն առաւ։ Ուրեմն աւելի մեծ եղաւ գերեզմանէն յառնել, քան թէ խաչէն վար իջնել։ Աւելի մեծ եղաւ յառնելով զմահ կործանել, քան թէ խաչէն իջնելով կեանքը պահպանել։ Իսկ երբ Հրեայք տեսան որ իրենց նախատինքն հակառակ խաչէն չիջնէր, կարծեցին թէ զայն յաղթեցին. ուրախացան որ անոր անունը մարեցին։ Այլ ահա, մահուան պատճառաւ տնուէր անեցաւ տարածեցաւ ընդ աշխարհ, յորմէ հետէ այս անհաւատ ամբոխը կարծեց զայն ջնջած ըլլալ. և երբ զայն սպաննած ըլլալուն վրայ կը ցնծար, ցաւով համակեցաւ անոր մեռած ըլլալուն համար. քանզի իմացաւ թէ նա այս չարչարանոց միջոցաւ հասաւ իր փառքին։ Այսպէս դատաւորոց զբօնի մէջ Սամսոնի զործերը զայս կը նշանակեն։ զի երբ Փղշտացոց Գազա քաղաքը մտաւ, Փղշտայիք անոր հոն մտած ըլլալը հասկնալով, նոյնհետեւ քաղաքը խիստ պոչարման երթարկեցին, պահապաններ կարգեցին, և ցնծացին թէ արդէն իսկ տունտնգոր Սամսոնը ձերբակալած ըլլան։ Սակայն գիտէինք թէ ի՞նչ ըրաւ Սամսոն։ Կէս զիշերին քաղքին դռներն հանեց տարաւ և լերան զագաթն ելաւ։ Զօժ, տմենասիրելի եղբարք այս գործոյս մէջ, զո՞վ եթէ ոչ մեր Փրկիչը կը նշանակէ այն Սամսոն։ Ինչ կը նշանակէ Գազա քաղաքը, եթէ ոչ դժոխքը։ Ինչ կը ցուցնի Փղշտացիներով, եթէ ոչ Հրէի դաւաճանութիւնը։ Որոնք երբ տեսան որ Տէլը մեռած էր և անոր մարմինը գերեզմանի մէջ դրուած, նոյն ընդ նոյն պահապաններ կարգեցին. և խնդացին յոյժ թէ կենաց գերահռչակ հեղինակը՝ ինչպէս Սամսոն ի Գազա, գերեզմանի փակեցին մէջ ըմբռնած ըլլան։ Իսկ Սամսոն ոչ միայն ի մէջ գիշերի ելաւ, այլ նաեւ դռները հետը տարաւ. քունդի և Փրկիչն մեր լուսնալէն առաջ յառնելով, ոչ միայն ելաւ գերեզմանէն ազատ, այլ և նոյն իսկ գերեզմանին և դժոխոց փականքները խորտակեց։ Դռները տարաւ. և լերան զագաթն ելաւ. քանզի յարութիւն առնելովը դժոխոց փականքը ի բաց բարձաւ, և համբառնալովը երկնից թագաւորութեան մէջ մտաւ։

Ուստի, ամենասիրելի եղբարք, Անոր յարութեան այս փառքը, որ

նախ նշանակուեցաւ ընդօրինակաւ և յետոյ յայտնուեցաւ իրապէս, բո-
լորով սրտիւ սիրենք, անոր սիրոյն համար մեռնինք: Ահա մեր ստեղ-
ծողին յարութեան մէջ սորվեցանք թէ անոր պաշտօնեաներն հրեշտակք:
մեր քաղաքացիներն են: Այլ՝ ուրեմն այս քաղաքացեաց այն բազմա-
խուռն հանդիսութեանց փութանք: Դանի որ աչօք բացօք չենք կարող,
գոնէ փափաքով և մտքով միանանք անոնց: Մոլութիւններէն առ առ
առաքինութիւնս փոխադրուինք, որպէս զի արժանի ըլլանք ի Դաւիթի տես-
նել մեր Փրկիչը: Մեր բոլոր կեանքին մէջ օգնէ մեզ Աստուած այս մեր
բաղձանաց մէջ, որ մեզի համար ի մահ տուաւ իր միածին Որդին, զՏէրն
մեր Յիսուս Բրիտոս, որ Անոր հետ կենդանի է և կը թափաւորէ Աստ-
ուած ի միութեան Սրբոյ Հոգւոյն, ընդ ամենայն յաւիտեանս, Ամէն:



ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ



ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ՈՒ ՊԱՏՐԻԱՐԻՆ ՄԻՋԵՒ
ԵՂԱԾ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՔ

Osservatore Romano քերթ իւր երեսը
յօդուածը կը նուիրէ ձեր ազգային խնդրոյն.

Նախորդ յօդուածով ընդարձակօրէն բացատրելէ վերջ Հայ Կաթո-
ղիկէ Համայնքին յուզում առթող խնդրոյն սկզբնապատճառները, այսօր
հակիրճ ակնարկ մը կը նետենք նաև այն շարժումներուն վրայ՝ որոնք
ցրտացուցին Ազգային Ժողովոյ ու Պատրիարքին յարաբերութիւնները, և
տեղի տուին անհաճոյ միջադէպերու:

Արդ, որոշ բաներուն ամէնէն գլխաւոր պատճառը եղաւ Խորհրդա-
րանական նորագոյն ձեւերու կուրօրէն նմանելու մտադարութիւնը, և
զայնս ազգային կեանքին մէջ իսկ ներմուծելու փութկոտ եռանդը. ա-
ռանց խորհելու թէ բոլորովին կը պակսէին զայն դորձադրելու համար
անհրաժեշտ եղած էական պայմանները, և որ աւելին է՝ իրապէս ուզե-
լով, առ ի չգոյէ ձեռնհաս իշխանութեան և օրէնսդրական մարմնոյ մը,
յափշտակել Պատրիարքին իշխանութիւնն ու իրաւասութիւնները, կեր-
պելով մը զանի կեղեքելով գործնականապէս իր պաշտօնական դիրքէն,
թէպէտ խօսքով ընդունելով ու բարձրացնելով անոր գերիշխանութիւնը:

Եւ ասի գլխաւորապէս երկու կերպով կատարուեցաւ. նախ հաս-
տատելով թէ քուէից առաւելութեամբ պէտք էին որոշումները տրուիլ,

և յետոյ ժողովոյն նախագահ մ'ընտրելով քմահաճօրէն՝ որու թէ՛ ատենապետի տնտեսը կը տրուէր, բայց իրապէս նախագահն էր ան, մանաւանդ թէ մինակ ու գործօն նախագահը նոյն ժողովոյն :

Պատրիարքը պարտաւորած էր սոսկ հանդիսատես ըլլալու, այնպէս որ, ոչ միայն լիովին կապտուած էր Կառավարութիւնէն ու Եկեղեցիէն իրեն սոսկ արուած իշխանութիւնէն և իրաւասութիւնէն, այլ և ոչ իսկ կրնար ժողով մը գումարել կամ ժողովոյն մէջ առարկութիւն մ'ընել և կամ որոշել օրակարգը և գումարման ժամը :

Ժողովը իր ուզածին համաձայն կ'որոշէր կամ կը մերժէր. ու կը յանդգնէր մինչև անգամ որոշումներ առնուլ իսկապէս հոգեւոր բաներու մէջ և կամ Պատրիարքին որոշմանց հակառակ : Ու թէ որ ասի բողոքէր նման ընթացքի մը դէմ՝ պատասխանը իսկոյն սա կ'ըլլա՛ր թէ «Պատրիարքին անձնական կարծիքն էր ան սոսկ, որ չէր կրնար բնաւ զօրել», և կամ թէ, «ստոյգ չէր որ ներկայ պարագային մէջ կրօնական խնդիր յարուցուէր» :

Այս կերպով Պատրիարքին իշխանութիւնը կը վերածուէր պարզ տիպի մը, այնպէս որ չէ թէ միայն իբր հոգեւոր պետ և իր սուրբ նուիրապետական աստիճանին մէջ ստուերէ զատ ուրիշ բան մը չէր ան, չէ թէ միայն նախագահի պաշտօնը կը զլացուէր իրեն, այլ և ոչ իսկ ո՛ր և է պատուիրակի մը պաշտօնն ու դիրքը կը տրուէր իրեն, քանի որ քուէ տալու իրաւունք չունէր :

Այսպէս ահա, իբր օտարական կրնար միայն ներկայ ըլլալ ժողովոյն և այդ հանգամանքին տակ անգամ կը զլացուէր անոր այն տարական քաղաքավարական ձևերը՝ որոնց ամենուրեք կ'արժանանան նոյն իսկ օտարները : Եւ իրօք, խորհրդարանական ձևին ներքեւ անոր դէմ կ'արձկուէին, ներկայ թէ բացակայ եղած միջոցին, ամենազգի թունալից նետեր, թշնամանք, լուտանք, եկեղեցական իշխանութիւնը ճգմելու սկզբունքէն մղուած միշտ : Կ'ըսէին թէ կ'ուզէին Խորհրդարանին նմանիլ, բայց արդեօ՛ք Խորհրդարանները չունին օրէնքներ որոնք արգելուն ինչ ինչ անձերու դէմ յարձակիլը : Միթէ նոյն իսկ ազգային պատիւը պէտք չէ՞ր յարգանք ազդել ու քիչ մը կիրթ վերաբերում հանդէպ ա՜նոր՝ որ ազգին հոգեւոր ու քաղաքական պետն էր :

Պատրիարքին դիրքը սակայն ծայրաստիճան դժուարին եղած էր : Խորհրդարանական ձևին տակ իր դէմ ուղղուած էր արհաւիրքի քաղաքականութիւն մը : Ժողովին կողմը բռնկող ոչկաթողիկէ մամուլը գրգռութիւնը կը ծաւալէր ժողովուրդին մէջ. բարինսրը խաբուելով, Պատրիարքը բոլորովին կղզիացած կը մնար :

Մէկէ աւելի անգամներ ուզեց նա դէմ կանգնիլ նման դաւերու, բայց պարտաւորեցաւ միշտ յետաձգելու : Եւ իրօք, ի՞նչպէս կրնար կուրծք տալ հոսանքին ուժգնութեան՝ եթէ իր ձեռքը թող արուած չէր

նոյն իսկ պարտ ու պատշաճ իշխանութիւնը ժողովոյն գումարման մասին որոշում առնելու: Իր բոլոր յոյսը դրած է Սինոդոսին վրայ:

Եւ սակայն, վստահելով ժողովոյն սա խոստումին վրայ՝ թէ Եկեղեցւոյ իրաւանց ու կանոնաց հակառակ բան մը պիտի չըլլար, ինչպէս նաեւ իր գումարելիք Սինոդոսին ազդեցութեան վրայ, Պատրիարքը որոշեց թոյլատրել քննութիւնը համբաւաւոր կանոնադրութեան ծրագրին: Ասով իր նպատակն էր միայն մէկ բանէ խոյս տալ, կամ լաւ եւս առջեւն առնուլ ժողովոյն կողմանէ ո՛ր և է որոշում մ'առնուելուն: Ինչ որ յոյժ դժուարին կացութեան մը մէջ պիտի դնէր Սինոդոսը՝ այսպէս կատարուած իրողութեան մը հանդէպ գտնելով ինքզինք: Ուղղակի բան մը չէր կրնար ընել Պատրիարքը, բայց անուղղակի կերպով կը յուսար թէ իր բարութեամբն ու համբերութեամբը, իր դիրքին զօրութեամբ պիտի արգելուր գէշ հետեւանքները, և այս յուսով Պոլիսը թողլով Հռոմ մեկնեցաւ: Ի՞նչ որ ուրիշ պատճառ մըն ալ ունէր սն այսպէս վարուելու. զի ժողովոյն մէջ շատ մը բարի տրամադրութեան տէր մարդիկ ալ կային, ու կը յուսացուէր թէ երբ անոնք առիթէն օգտուէին, կրնային մեծապէս նպաստել գործոյն յաջողութեանը, բայց դժբախտաբար չկրցան օգտուիլ անոնք: «Այժմ նոյն իսկ, կ'ըսեն Հայ Եպիսկոպոսներն իրենց նամակին այս մասը վերջացնելով, մենք համոզուած ենք իրենց խղճի անկեղծութեան և ուղղամտութեան, որով ցաւ ի սիրտ կը պարտաւորինք դատապարտել ամբողջ ժողովը՝ որուն անոնք ալ կը մասնակցին: Բայց նաեւ համոզուած ենք թէ, հազիւ անոնք պիտի հասնու ըլլան կացութեանը՝ իսկոյն լուսոյ առջև պիտի բանան իրենց աչքերը»:

Մինչ այս մինչ այն Պատրիարքին կացութիւնը օրէ օր կը վատթարանար: Ազգային ժողովոյ անդամները, որոնք տեսնելով թէ եպիսկոպոսները կ'ընդդիմանային քննելու նոր կանոնագիրը, բոլորովին մոլար սկզբունքներու վրայ յենլով՝ յայտարարած էին Պատրիարքին թէ իրենք տրամադիր էին զայնս բարեփոխելու իր փափաքանաց համաձայն, որ բանին համամիտ գտնուած էր Պատրիարքն ալ. յուսալով թէ խաղաղաբար լուծում տալու միջոցը պիտի գտնուէր, բոլորովին անհոգ կը մնային եղած խոստումը պահելու: Ի՞նչ պիտի մտածէին Եպիսկոպոսները Պատրիարքի մասին, երբ իրազեկ ըլլային թէ անիկա փոխանակ ետ առնուլ տալու առաջին ծրագիրը, ընդհակառակն հետամուտ կ'ըլլար վիճաբանութեան դնելու կանխաւ ներկայացուած ծրագիրը անփոփոխ կերպիւ: Անշուշտ պիտի կասկածուէր թէ թշնամական դիրք մը կ'ստանձնէր Պատրիարքը Սինոդոսին հանդէպ:

Ժողովին տուած նորանոր սպահովիչ խոստումներուն և իր փոխանորդին վրայ վստահանալով—որ փոխանորդը պետին բացակայութեան պահուն պիտի զգուշանար ամէն անհամաձայնութենէ և քախումէ, Պատ-

րիարքը կը կարծէր թէ քուսական ապահովութիւն մ'ունէր համբերել կտրենալու մինչև մերձաւոր Սինոդոսի գումարումը :

Բայց աշխարհական անդամները, հակառակ Փոխանորդին համոզկեր խօսքերուն, կրկին անգամ խնդրոյ նիւթ ըրին այն փաստերը՝ որոնք կարող չեն վտանգաւոր ուղի մը առաջնորդել, որով Պատրիարքն ալ չէր կրնար այլեւս վարանիլ հրաժարելու ամէն պատասխանատուութենէ, նման պարագայի մը մէջ, և իրեն ուրիշ բան չէր մնար՝ եթէ ոչ կա'մ իր վրան առնուլ պատասխանատուութիւնը բոլոր անցեալ և դալիք ղէպքերուն : Ինչ որ ի խղճէ կարող չէր, և կա'մ լուծելու ժողովը : Ինք այս երկրորդ մասն ընտրեց :

Արդէն այն րոպէէն որ ինք ամէն յոյս կորուսած էր Եկեղեցւոյ սկզբանց համաձայն արքագրուած տեսնելու նոր կանոնագրութիւնը, Պատրիարքին կողմանէ այդ կանոնագրին աշխատակցութիւնը չէ թէ միայն լրջօրէն վտանգի ենթարկել մը պիտի ըլլար իր անձն ու իր դիրքը, այլ նաև Եպիսկոպոսներն ալ սխալ քայլի առաջնորդելու պիտի ծառայէր, ինչ որ հետեւաբար ճշմարիտ գայթակղութիւն պիտի պատճառէր :

Եւ սակայն, մինչ Եպիսկոպոսներէ ոմանք արդէն պատասխանած էին Պատրիարքին՝ թէ իրենք բոլորովին կը մերժէին կանոնագրութեան սկզբունքները, և այլք անկարելի կը սեպէին զայն վիճաբանութեան դնելը Հաւատոյ Տարածման Ժողովոյ նամակէն վերջ, Ազգային Ժողովը, որու միակ պատասխանատու անդամը Պատրիարքն է, դարձեալ կը պնդէր իր որոշման վրայ, առանց ամենափոքր բարեփոխում մ'իսկ ընելու կանոնագրին մէջ անցուած յօդուածներուն վրայ, մանաւանդ թէ ա'լ աւելի որոշակի կը ցուցադրէին զայնս միշտ մոլար սկզբունքներու վրայ յենլով : Պատրիարքը, ուրեմն, կա'մ պէտք էր լուծել ժողովը, և կա'մ, յաջա կառավարութեան և Հռովմի կուսակից կարծուիլ ժողովին սխալներուն, որ ժողովը սոսկ էր սատարն ու պաշտպանը Եկեղեցիէն ու Եպիսկոպոսներէն կանխաւ դատապարտուած սկզբունքներուն :

Եւ առանց նկատի առնելու թէ ժողովին որոշումները այլուստ կրնային մեծ փեսա պատճառել Հայ ցեղին, նոյն իսկ ազգային տեսակէտով, երբ՝ օրինակի համար, կը պահանջուէր որ օտար երկիրներու մէջ գլխաւոր ամէն Հայազգի Եպիսկոպոս Պատրիարքին հպատակ նկատուի, ինչ որ կրնար օտար Պետութիւններու կողմէ հակառդեցութիւն մը հրաւիրել՝ որ հնար է չարագուշակ հետեւանքներ մը յառաջ բերէր օտար երկիրներու մէջ եղող հայերու գլխուն :

Թէև լաւ կը կշռէր Պատրիարքը այս բոլոր պատճառները, սակայն չուզեց ինք միայն ստանձնել իր որոշման պատասխանատուութիւնը, ու Ս : Հօր ներկայացուց իր բոլոր դժուարութիւնները : Ասի խղճի պարտք մըն էր Պատրիարքին համար : քանի որ կանոնագրութիւնը քառակոխ


կ'ընէր ամէն մեծ սկզբունքները, և Հոռով ալ արդէն իր վճիռը տուած էր այդ մասին:

Բայ աստի՛, հարկ է միտ դնել թէ Ժողովը, Պատրիարքին գրած վերջին Հովուականէն առաջ, որոշած էր զանի ամբաստանել Հոռովի առջև ու Ս. Հօր դատաւարանի ներկայացնել ամբողջ հարցը: Ս. Հայրը հաստատեց Պատրիարքին բռնած ընթացքը, և ասի՝ որ արդէն կանխաւ երկու առանձնական հանգամանք ունեցող նամակներու մէջ արտայայտած էր իր միտքը իրերու վիճակի մասին, այս անգամ հրատարակեց հովուական թուղթ մը՝ որով կը վճռէր Ժողովին պաշտօնապէս լուծումը:

Ասոր լիուլի իշխանութիւն ունէր ինք, և արդէն ծանր պատճառներ մըն ալ կային այդ լուծումը վճռելու: Եւ իրօք, ինչու որ ապօրինի ընտրութեամբ եղած Ժողով մըն էր ան, թէ՛ որովհետեւ քուէ տալու իրաւունք չունեցող ընտրելիներէ եղած էր ան, թէ՛ որովհետեւ վախի ներքեւ տեղի ունեցած էին ընտրութիւնները, և թէ՛ որովհետեւ անոր վաւերացումը բռնութեամբ կորսուած էր Սապպաղեան Պատրիարքէն: Ու թէ որ, Սինոդոսն ու Պատրիարքը խաղաղութեան սիրոյն համար լոկ թոյլատրած էին իրաց այս կացութիւնը, բայց և այնպէս ինչա՛ն ընդունած ու վաւերացուցած չէին զայն:

Բաց աստի, Ժողովը դուրս ելած էր իր իրաւասութենէն, իր ընթացքը յիշափոխական երեւոյթն ունէր ըստ ամենայնի, առ ոչինչ գրելով Պատրիարքին ու անոր Փոխանորդին սզգարարութիւնները, ու կ'ըսպառնար անթիւ վնասներ պատճառելու Հասարակութեան: Ժողովին լուծումը ցայտուն կերպով ծառայեց մէջ տեղ հանելու այս ձգտումները, և ինչ որ արդեամբ կը մտածուէր Պատրիարքին, իշխանութեան մասին: Եւ իրօք, ո՞վ կրնար թուարկել Պատրիարքին հանդէպ եղած բացայայտ ըմբոստական արարքները: Լուծուած Ժողովին իր նիստերը չարունակելը, Պատրիարքին Հովուականին մէջ պարզուած վարդապետութեան հակառակ Ժողովին ուղղած չրջաբերական նամակը, Պատրիարքարանի վրայ յարձակում գործել նոր կանոնագրի խմբագրութիւն, ահա ասոնք եղան ըմբոստական արարքները այն Ժողովին՝ որ իր դիմակը վար տունլով այս սուհետե իր խոյ իշխանութիւնը կը փոխանցէր Պատրիարքին իշխանութեանը տեղ:

Ահա այս եղաւ: Ազգային Ժողովին ու Պատրիարքին միջև ծագած վէճին սկիզբը, ընդարձակումը ու վերջին ճգնաժամը: Առաջիկային վերջին յօդուածի մը մէջ պիտի համառօտենք այն պատշաճ խորհրդածութիւնները՝ զորս կը յաւելուն Եպիսկոպոսները այն դէպքերուն վրայով՝ զորս բացատրած էին այնքան դաղափարի պարզութեամբ ու ճշգրտութեամբ, և այնքան կուռ ու չափաւոր ձեւով մը:



Ասանա 6/19 Մարտ 1912

Հետեւեալ նամակը քննուեցանք .

Մարաշըն Էրմէնի Դաթօլիք ճէմատներն մանէվի էօլումիւնիւն իւզէրինէ թէֆէքքիւր .

Պիր միւստէթտէն պէրու պէյնինիզտէ հուսուլա կէլէն միւնազաւլարտան խալիսանէ վիճտան վէ աօղրու ֆիքր իլէ տիւշիւնիւր խէնիզ , մաւվընըլըն խիթամը . եազլաշմըշ տըր , Ալլահ էսիրկէսին :

Պու կիւնլէրտէ «Մեհնուա»նըն 4958 վէ 4959 նիւսլէսինտէ ճահիւնէ մալիւմաթընըլ կէօզտէն կէչիրէրէք քէնտի վաթանըմըն վէ քիլիսէմին իւզէրինէ պէօլիւք աճըլար հիսս էթտիմ վէ սիլլէրէ տէ շու պիր գաշ սաթըրտան իպարէթ քէլիմէլէրի հազմաղա արզու էլլէրիմ :

Մէզհէպ վէ վաթան պիրատէրլէրիմ , պունու էյի պիլէլիմ քի պիւզիմ տիյանէթիմիզին էհէմմիյէթլի պիրինճի հօգթասը պու տուր , Սը . Պետրոս Առաքեալըն վէքիլի պուլունան Բաբա հազրէթլէրինէ իթաաթ էթմէք՝ օրունանի հէր նէ քի էմիր պուլուրուրսա :

Պիրատէրլէր , կէչմիշ կիւնլէրիմիզի կէօզ էօնիւնէ ալարազ թէֆէքքիւր էտէլիմ . օլ ազիզ քիլիսէ տէրունինտէ ազիզ հալիսկոպոս վէ ազիզ վարդապետլէրին մէզարլարը վար սըր . պու զաթլարըն մէզարլարընըն իւզէրինէ պու ֆէնա ամէլլէրինիլ իլէ հոգհանգիստ հափըյօրսունուզ :

Պիր փէտէր էվլատընա պալըգ իսթէրտէ երլան , վէ էքմէք խիլէրսէ թաշ վէրիւր մի . պունուէն կիպի քիլիսէ տէ քէնտի էվլատլարընըն մազտուր օլտըրընը իսթէմէզ :

Սիլլէրէ սիւալ էտէրիմ , քիլիսէտէն օլ րուհ իլէ սիզ մի թէշքիլ օլտունուզ վէ եախօտ քիլիսէտէն թէշքիլ օլտունուզ իսէ նիչիւն էմրլէրինէ իթաաթ էթմէյօրսունուզ . եօզ քիլիսէյի սիզ թէշքիլ էթտիւիլ իսէ , նիչիւն անըն հազընըն այազ ալթընա ալրապ էզմէք իսթէյօրսունուզ վէ պու սէլաիյէթի նէրէտէն ալտընը :

Կէչմիշ սէնէլէրտէ եպիսկոպոսլարա գարչը եափմըշ օլտունուզ հազարէթլէրի չիմտի եինէ հափըյօրսունուզ :

Էյի պիլիւրսինիզ քի պիր զէման թուրքիան Աւետիս Գերապայճառ Մարաշ թիւմինէ թաեին օլունտու . պիր գաշ սէնէ իգամէթ էթտիքտէն սօնրա պիր պէհանէ իլէ գապուլ օլունմայըպ , էնճամ Հալէպտէ վէֆաթ էլլէտի . անտէն սօնրա Մուրատեան հազրէթլէրինի մուհապպէթ իլէ գապուլ էլլէտիւիլ , ծնու տա պիր պէհանէ իլէ գապուլ էթմէյիպ զամալլը շուրատա պուրատա կէզէրէք էնճամ Չամառ վանգընտա վէֆաթ էլլէտի : Պունուէն էյի պիլին քի պիր հալիսկոպոս քէնտի թիմինին փէտէրը րունահանիսի տիրա : Պունտան սօնրա Գերյարգելի Կէտիկեան հազրէթլէրինի ինթիսապ էլլէտիւիլ , փէք ալա հափտընը , լաքին իչինիզտէ գարըշուրըպ :

չըզարարաց քուէթերինդիւ իջնէ թագսիմ էտէրէք քէնտի էլլերինդ իւն
ճէլլաւորնդ ուտունդ :

Շինտի տէ Արփիարեան հազրէթլէրիյէ տիւշիւօրսունուզ, մագսէ-
տիմին նիհայէթի շու տուր քի Բարա հազրէթլէրինին թաստիգ էթմիշ օլ-
տուղու Նպիսկոպոսա իթաաթ էթմէք լազլմ տրի. էյէր քի ճիատի Գա-
թօլք խէնիւ, պիրատէրլէր, սիզլին պաշգա եափաճագ պիր մատտէնիւ վար-
խէ, օ տա պու տուր, Բարա հազրէթլէրինէ իթաաթ, իթաաթ, իթաաթ
տրի. պէօլէճէ խաթմի քէլամ էյլէրիմ :

Ա. Ս. ԱՃԷԱԵԱՆ

Ս. ՍԻՒՆԸ

սուսուս

Ի Հոռվմ, Սրբուհայն Եւպրատիայ Եկեղեցւոյն մէջ, որ Եսկուի-
լինեան ըրոյն վրայ կառուցուած հին Պագիլիսա մէջ է, յոգնախուռն
հուսաապեալներէն մեծ ջերմեանդուլեանիւ կը մեծարուի ամենասուրբ
Սիւնն, որու վրայ կապուեցաւ մեր Փրկիչն Յիսուս Քրիստոս և խաւա-
ղանուեցաւ : Այս Մայր Եկեղեցին ճիշդ Ս. Եւպրատիայ կամ Պրաքսի-
դէսի վկայուելոյն տանը վրայ շինել տուաւ Ս. Պրոս Ս. Քահանայա-
պետը որ ընտրուեցաւ յամի փրկութեան 158. յետոյ նորոգուեցաւ այն
ուրիշ Քահանայապետներէ, մանաւանդ Ս. Պանկուալ (Յարուլիւն) Ա. է,
որ տնոր մէջ կառուց Ս. Զէնոնի Մարտիրոսի մատուռը, խճանկարներով
(mosaïque) զարդարուած, որոյ մէջ կայ հին և մեծարեալ Պատկեր
մը Ա. Աստուածածնի՝ իր Մանուկին հետ. ահա այս մատուրին մէջ է
որ ի յարգութիւն հուսաապեալոց դրուած է Ս. Սիւնը :

Այս ամենասուրբ Սիւնն որու վրայ ձաղկեցաւ Տէրն մեր Յիսուս
Քրիստոս, որդէն կը մեծարուէր Սիւն լերան վրայ՝ Վերնատան Եկեղեց-
ւոյն մէջ. իսկ վեցերորդ խաչակրութեան ժամանակ Ուորիգո Գ. Քահա-
նայապետին Պատուիրակն եղող Կարդինոս Յովհաննէս Գոլոմնա բերաւ
զայն Ի Հոռմ. յամին 1228, և զետեղեց Ս. Եւպրատիայ Մայր Եկեղե-
ւոյն մէջ, ճիշդ այն մատուռն որ կը կոչուէր Պարսկ Արքայութեան. յե-
տոյ փոխադրեց Սրբոյն Պատկուալի և Զինոնի մատուռը, ուր կեցած է
հիմա, բիւրեղեայ ճոխ պահարանի մը մէջ, գեղարուեստ մետաղեայ միջ-
նակապերով և դրուապներով զարդարուած :

Ամենասուրբ Սիւնն գեղեցիկ մարմարիւն մըն է խառն. ճերմակ
եփնագոյն (d'apre) կոչուած. կոնաձև մաննեքած ոլորուն (cannelé)

խորիսխը լայն է և կ'երթայ ու կ'ամփոփի մինչ լուսնի օղակն որ անոր ամենէն բարակ մասը կը շրջապատէ. ասկէ՛յ վերջ կը սկսի լոյննալ մինչև զգալաթ: Բարձութիւնն է 63 հարիւրորդամէթը, խորիսխին տրամագիծն է 40, գագաթին՝ 20, իսկ ամենանեղ տեղուան՝ 13: Հոս հին քանի մը մասեր կը պակսին, որոնք ժամանակին փրցուած են բարեպաշտներու կողմանէ, մանաւանդ Սիքոտոս և ի Բահանայապետութեան օրով:

Շատ Սուրբեր, ինչպէս Սրբուհի Պրիճիստա, Ս. Կարոլոս Պորրոմեան, Ս. Պիոս Ե., Ս. Փիլիպպոս Նէրի և այլք, արտաքոյ կարգի ջերմեանդ էին Ս. Սեան և սուէպ կուգային Ս. Եւպրաքսեայ Եկեղեցին զայն մեծաւելու և Փրկչին մերոյ անիմանալի խոնարհութեան և զանա-
ճեմ ըլլալուն երկրպագելու համար:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ն Ո Ր Վ Ս

Անցեալ Փետր. 28ին ի Հռոմ փախճոնեցաւ Արհի. Եղման Սթանը Արքեպիսկոպոս: Ինքն անգղիացի էր, Պարոն Դամոյո-Սթանորի զաւակն, և ծնած ի 1831: Ուսած ի Հաւիթ, անգղիական դպրոցի մէջ, և սպա Ագնուական Եկեղեցականներու Բահանայապետական Ակադեմիոյ մէջ, 1856ին Բահանայապետական բանակին Մատրանապետ կարգուեցաւ, և 1867ին, Կտրիպալտի արքանանքի տոնէ, պատերազմական գերի եղաւ: Ապա Ս. Հօր Սենեկապետ, Լատերանեան գլխաւոր Մայր Եկեղեցւոյ Կանոնիկոս, և վերջապէս 1888ին Արքեպիսկոպոս անուանեցաւ: Անգղիոյ Արքայական ընտանեաց մտերիմ բարեկամն էր:

* Մարտ 17ին շատ մեծ չքեղութեամբ կատարուեցաւ տարեգարձ տօնախմբութիւնը Ս. Փիլիպպոս Նէրիի մեծ հրաշքին, որ Մասիմոյ իշխանական ընտանիքին մի քահանայ անդամը՝ Շմ Բադայի, յարութիւն տուաւ ի 16 Մարտի 1583: Այս յիշատակութիւնը կը կատարուի Մասիմոյ իշխանին հնազարեան սիւնազարդ պալատան հիմնադի Մատրոն մէջ որ ճիշդ հրաշքի վայրին վրայ կառուցուած է: Հռովմէական Ագնուականութիւնը լեցուցած էր այս օրըսկայրը:

* Իտալիոյ աղանդաւոր միջափոյրերն արտաքոյ կարգի զմիջոցեր էին քանի մը շաբաթ տուալ վախճանած մեծ ծովակալ Օպրիի ցոյց տուած Կաթողիկէ քաջութեան հանգիստաւոր օրինակին: Թարսնեոյ ծոցը, Հրամանատար մարտանուուն վրայ մեռուեալ Կանչել տուաւ քաղաքին Արքեպիսկոպոսը. Խոստովանաւ եղաւ, վերջին թողակն և վերջին Օնուին տաւա, և խողաղութեամբ ննջեց:

Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Ե Ա Շ Ի Ա Ր Հ

Մանթէնէկոյի Նիքոլա Թադաւորը՝ իր երէրին և Օերպիոյ Կաթողիկէոյց նախա-
գահ և Հապմայի մէջ նոր օծուած Արքեպիսկոպոս Տադէլիքի հետեւեալ շնորհաւորական

հետագիւրն առաքած է ի Հռովմ. Վեհապետեցեալ իմ ամենէն անկեղծ շնորհաւորութիւններս՝ առթիւ Ձեր հոգեւոր Հովուի ձեռնադրութեան իմ հաւատարիմ Կաթողիկէ Հպատակներուս վրայ. Նիւնիաւ։— Այս նոր Արք.ը Ուրբանեան դպրոցի աշակերտ եղած է. և Մոնթէնէկրոյի մայրաքաղաքին արքայական Լիկէդին մէջ դադրիւրէն լեզուի և բոնասիրութեան ուսուցիչ եղած է, այն պետութեան մէջ միակ դէպք՝ որ Կաթողիկէ քահանայ մը պետական վարժարանի մէջ դասախօսէ։ Ինք ծնած է Անթիվարիի մէջ ազնուական ընտանիքէ մը։ Անթիվարիի Արքեպիսկոպոսութեան անցեալը շատ փառաւոր ու կարեւոր եղած է։ Իններորդ դարու մէջ հոն ժողովներ գումարուած են, որու մասնակցեցան Յովհ. Բ. Քահանայապետին նուիրակները, Յունաստանի Չար Վասիլի ներկայացուցիչները, Սերպիոյ Թագաւորն Սվէթոյիք. այս առթիւ կանգնուեցաւ Դիոկլէայի Թեմը, որ այսօրուան Բոսկորիցան է։ Կ'ըսուի թէ յամին 927 կործանեցաւ Դիոկլէայ. իսկ 1067ին Աղեքսանդր Բ. Քահանայապետը, հին Ձէտայի (այժմեան Մոնթէնէկրոյ) Թագաւորն ու Կոպոտարն եղող Վոյսլավուիչի խնդրանքով Անթիվարիի Արքեպիսկոպոս մ'անուանեց, որուն հպատակ էին Ծէթայ, Բաթթարոյ, Սրայաթոյ, Տուրացոյ, Պոեանա, Սերպիա, Պոնիա, Հէրցէկովինա ևն. ժե. դարուն առաջին կիսուն մէջ Անթիվարի և Ալպանիա անցան Վենետիկեան Հասարակութեան գերիշխանութեան տակ, մինչեւ 1521, երբ Սիւլէյման Մեծ Սուլթանն Թրքաց, յաղթականն Մոհամէ և Հունգարիոյ, տիրապետեց ըրոր այս կողմերն ալ։ Անթիվարիի Արքեպիսկոպոսը միշտ պահեց Սերպիոյ Նախագահ տիտղոսը, թէեւ Թրքական գերիշխանութեան ժամանակ, երկայն ստեն Շքոարոյի սթոպին ներքեւն էր։ Իսկ 1878ի դաշնադրով այս քաղաքն Մոնթէնէկրոյի անցնելով, սկսաւ Թագաւորը եւրոպական սիւթէմով կարգաւորել իր պետութիւնը և Անթիվարի ևս իր հին փառքերն վերստացաւ։ Թագաւորը ինքրից Լեւոն ԺԳ.է որ այդ Արքեպիսկոպոսական քաղաքը իր հին նուիրապետական շքեղութեան մէջ վերահաստատուի. և հետեւապէս Ս. Աթոռոյ հետ դաշնադրութիւն (Concordat) մը կնքեց։ Անմիջապէս վերջը Նախագահ Սերպիոյ կարգուեցաւ Արհի. Միլինովիչ, և առաքինութեամբ և իմաստութեամբ կառավարեց. մինչեւ ջմահ, ի 1910։ Հիմա իրեն կը յաջորդէ Արհի. Նիքոլա Տոպրէչիչ։

~~~~~

## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

~~~~~

* * Անցած շաբաթ օր, Մարտ 17|30, Արհի Լեւոն Արք. Բէշէճեան, վիճակաւոր Սեբաստիոյ-Եւդոկիոյ, և Արհի. Յովհաննէս Եպս. Նաղլեան, վիճակաւոր Տրապիզոնի, միկնեցան իրենց թեմերը։

* * Նոյնպէս Կիրակի օրը մեկնեցաւ շաղեկաւորով դէպ յԱնկիւրիա, նոյն վիճակին Եպս. Արհի. Գրիգոր Գերապայծառ Պահապանեան, ինչպէս գրեցինք։

* * Կիրակի օր, Երզնկադարձ, ամսոյս 18|31ին, յետ միջօրէի ժամը 5ին Ը. Ե., Կաթողիկոսարանի մեծ սրահին մէջ — ուսկից՝ ինչպէս ըսած ենք մեր 36 թուոյն մէջ, էջ 126, Ամենապ. Հոգեւոր Տէրն և իւր եպիսկոպոսունք ու պաշտօնէութիւնը մեկնած և տեղափոխուած էին Վարդապետանոցին կողմը. — կարգացուեցաւ Եպարքոսական Պաշտօնաւարտն, որ կը հրամայէր՝ փոխանակ հրաժարեցուցիւ Բաթթիքի, ընտրել Տեղապահ մը, եպիսկոպոսաց դասէն, անարատ ըստ վարուց և հաճելի տէրութեան։ Այս ընթերցումին ներկայ գտնուած են նաեւ Արհի. Խաչատուրեան Արքեպս. Մալաթիոյ, իւր քարտուղարն Կոռյուան Յովհ. և Ուղուրեան Միսրոպ վարդապետք։ Ընթերցումէն վերջը ժողով գումարեր են, նախագահութեամբ նոյն Եպս.ի, և քանի մը որոշողութիւններ աւելր։

* * Արհի. Գալոր Եպս. Թօփուգեան, վիճակաւոր Տարօնոյ և Վասպուրականի, քանի մը օրուան համար Պրուսա գնաց իր Քղբօրը Մեծ, Խաչիկ էֆ.ի հետ։ Երկայն տարի-

ներ ծառայած է նա նոյն թեմին մէջ, ամենայն գովութեամբ և անխոր՝ ամենէն սիրուած և յարգուած:

* * Մերոպ Վ. Ուղղութեան և Զաւակներէն Վ. Կոռնիան կախակալուած են հոգեւոր իշխանութեան կողմանէ, ի մասնակարարութենէ Ս. Խորհրդոց և յամենայն Աստուածային պաշտամանց:

* * Ամսոյս Յին, ըստ Ն. Տ.ի, Քահանայապետական Նուիրակն մասնաւոր նամակաւ կը հաղորդէր Վսեմ. Կարգինալ Մէրի տէլ Վալի հետեւեալ հեռագիրը. «Սրբազան Հօր ցաւաւորութեամբ Մարտիրոս Եպիսկոպոսը կախակալուած է յաստուածայինս. Պատրիարքը կարող է զայս խնկն հաղորդել»: Սրբազան Քահանայապետին տոյն տրամագրութիւնը վերոյ յիշեալ Եպիսկոպոսին զեկուցուեցաւ և նոյնպէս գրուեցաւ եկեղեցեաց ժողովրդապետներուն, Յետ զեկուցման, նա իր ընտկարանը փոխեր է Կաթողիկոսարանի շէնքին մէջ:

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Օսմ. Երեւոյնական ընտրութեանց համար կողմուած Ազգային Համերաշխական ժողովը չկրնալով համաձայնութեան գոյն մ'ստանալ, ինչպէս Արձագանգ սկիզբի օրէն իսկ գուշակած էր, Ազգ. Երեսփոխ. ժողովին մէջ ուղեցին նոյն խնդիրը յուզելու. Դեր ու դէմ կարծիքներէ վերջ, բանաձեւ մը ներկայացուեցաւ՝ ըստ որում Պատրիարքին — իբր միակ միջնորդը կառավարութեան և ազգին յարաբերութեանց, ու միեւնոյն ատեն իբր պետը գործադիր իշխանութեան — կը յանձնուէր անով զբաղելը: Ու քուէի գրուելով բանաձեւը՝ 27 քուէ ուսացաւ. ներկաներէն մեծ մասը ձեռնպահ մնալով, Բայց երբ ուղեցաւ Պատրիարքին կարծիքն առնուլ՝ անի բացարձակապէս մերժեց բանաձեւը հակառակ գտնելով Սահմանադրութեան ժողովը ցրուեցաւ առանց եղբակցութեան գալու: — Սակայն վերջին պահուն, վերահաս ընտրութեանց մէջ չխայտառակուելու համար, վերջին ճիգով մը կուսակցութիւնը միացեր են, և ընտրական հանելուկը լուծելու կերպ մը գտեր են. տեսներ թէ այսքան երկունք ի՞նչ պիտի ծնանին:

* * Ինչպէս Ռուսաստանէ հասած հեռագիր մը կը հաղորդէ, Ռուսաց Կայսրը վաւերացուցած է Էջմիածնի Կաթողիկոսական ընտրութիւնը, որով Սուրենեանց Արքեպիսկոպոսը Կաթողիկոս կը հռչակուի ընդ անուամբ Գեորգ Ե.ի:

* * Հայոց մէջ նորէն հոսանք մը ծայր տուաւ՝ այրի քահանաները ամուսնացնելու, և Գում Գարուի Կրօնական ժողովը կարեւորութիւն կուտայ այդ միտումի: Թերթի մը մէջ այսպէս կը ջատագովուի այդ նորեկուկ գաղափարը. «Այո՛, խոշոր այո՛, թէ պէտք է մեր եկեղեցւոյ ծէսերը սրբազանին, թէ այրի քահանաները ամուսնանան, թէ կուսակրօնութիւնը վերցուի, թէ պահքը կամաւոր դառնայ, թէ՛ պատկը ամէն օր և ամէն ժամանակ թոյլատրելի լինի... հայ եկեղեցին, որպէս աւելի ժողովրդական, լայնցնէ՛ քիչ մը իր օրէնքները... ազատէ մեր թշուառ այրի քահանաները և երիտասարդ վարդապետներ՝ այդ ծանր, ալլանդակ ու անբնական լուծէն»: — Ահա՛ այսպէս այն եկեղեցւոյն մէջ, յորում կը տիրեն աշխարհականք, հաւատալիք և վարդապետութիւնք խողովիկ կը դառնան. ըստ քմաց փոփոխելի և անփոփոխելի. այսպէս կը քայքայուի եկեղեցի մը, որ հիմ չունի զՎէժն որոյ վրայ շինեց Բրիտանոս իւր Ս. եկեղեցին:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Թերթերը կը գրեն թէ Պուլկար աղբիւրներու համաձայն Թուրքիա մեծամեծ պատուաւորութիւններ կը տեսնէ Պուլկարիոյ սահմանազիտոյն վրայ: Յարգ, կ'ըսեն, Թուրքիա հոն համախմբած է աւելի քան 400 հազար զօրք կամ համախմբուելու վրայ է: Այդ նպա-


տակաւ Յ օգանաւոր ալ զբաւած են եղեր էտիքնէ: Գուրգարիա եւս իր կողմէ անգործ չի մնար. ան ալ հրաման ըրած է Պատերազմական նախարարութեան կողմ ու պատրաստ բռնելու զօրքը ամէն պատահականութեան գէժ:

* Ներկայ ընտրական պայքարի մէջ տեղ տեղ պատահած ազեղութիւն գէշքերէն սղգուած, կառավարութիւնը օրոյնց պաշարման վիճակ հրատարակել Սելանիկէ, Իզմիրի, Լանկազայի և Էսկիշէհլիի մէջ:

* Օսմ. կառավարութիւնը Անգլիոյցի Ուիլիամ փաշայի տեղ պաշտօնի կոչեց գեր-ծովակալ Լիմբասը, որնոր միեւնոյն տաւն Երզնային նախարարութեան խորհրդականն ալ պիտի ըլլայ: Դեր-ժովակալ Լիմբաս իր սպայակոյտով տեղս պիտի ժամանէ Ալքիլի կիսուն:

* Հասած մասնաւոր հեռագրի մը համաձայն Իտալական նաւատորմը այս միջոցիս թէնէտա կղզւոյն բացերը կը պտտի և անցնող շոգենուներուն վրայ խուզարկութիւններ կը կատարէ: Սակայն յետոյ այս լուրը շատուգուեցաւ:

* Քողմիտի էջ.ի բանտէ ազատուելուն համար յունաց Պատրիարքը ազալքեր է կառավարութեան և խոստացուեր է իրեն սր կայսեր գահակալութեան առթիւ պիտի աշխատուի ազատ արձակել զինքը:



Մ Ի Զ Ա Զ Գ Ս Յ Ի Ն

Իտալիոյ մէջ մեծամեծ սնունկութիւններու յուրերը հեռզհետէ կ'աճին: Այսպէս, կաշիի վաճառականներէն Բիէթրօ Թօնիօ՝ 6 միլիոն ֆր. բացով սնանկացած է վերջերս: Նմանապէս Միլան քաղաքին մեքենայի գործարաններէն Աթթիլիօ, Ֆրանքօ և Սիէթօ տունները անանկ հաշակուած են 4 միլիոն ֆրանք բացով:

* Մ. Վենիցիոս իր կորովի քաղաքականութեամբ յաջողեցաւ վերջապէս մեծա-մոռնութիւն շահիլ Յունաստանի մէջ կատարուած ընտրութիւններուն:

* Անգլիոյ Երեսփ. ժողովը 208ի դէմ 222 քուէով մերժեց կիններու քուէարկու-թեան օրինագիծը:

* Դաշնակցութեան հսկայ դաւը վերացած.— Բեգերսպուրի Երեւոյտը այսօր «Զ. Յ», Դաշնակցութիւն ընկերութեան դէմ բացուած դատին մասին իր վճիռը արձակեց: 146 տմբաստաններէն 4ը 4էն 6 տարուան տաժանակիր աշխատութեան, 26ը ութսորի և 21ն ալ 3 ամիսէն 2 տարուան բերդարգելութեան 1էն 3 տարի բանտարկութեան պատուար-տուեցան: Իսկ 94 հոգի անպարտ արձակուեցան:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Քրիստոս յարեալ ի մեռելոց	129
Հայկական խնդիր	134
Ասանցան մեքուպ	139
Ս. Սիւնը	140
Տեղեկագրական	141

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԳՐԱԳԵՏ
ԳԷՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Օսմանեան Գործակցական Ընկ. Էպուստուլոս հասէսի Նօ. 27

«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի պատճենական Նաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծագիր էջերէ բաղկացած եւ նոյն բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյց ամէն յուրերն՝ համառօտաւած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբեր կարգալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար	
Տարեկան	Դնեկ . արծ. 40
Վեցամսեայ	» » 20
Արասահման	
Տարեկան	Ֆրանկ 10
Վեցամսեայ	» 5
Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Քոստով եւ կամ մէկ մէկ դրոնոց նամակադրուով :	

Մէկ թիւ 1 Դահեկան



Նամակ, յղուած, եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց
Բերա Կ. Պոլիս

Katoghighe Arzakank
Patriarcat Catholique
Pera Constantinople

- ԾԱՆՕԹ.— 1.— Առձազանց կը հրատարակուի շաբաթ օրերը:
2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու եւ է յղուած:
3.— Չեղադիրներ եւ չեն դարձուիր:
4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած լլկան թուղթին մէկ կողմը միայն:
5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կրկատարուին: